

Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի ուղերձը Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ

08.12.2017



1950թ-ից ամբողջ աշխարհում դեկտեմբերի 10-ը նշվում է որպես Մարդու իրավունքների միջազգային օր:

Մարդու իրավունքներն ու ազատությունները կենսական արժեքներն են, որ պատվանդան են հանդիսանում առողջ ու զարգացած հասարակության ձևավորման համար:

Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանությունն օրեցօր արձանագրում է հաջողություններ՝ դառնալով իրական ու սպառնիչ արժեք:

Շնորհավորում եմ քաղաքական, աշխարհագրական ու ազգային սահման չճանաչող կարևորագույն այս օրվա կապակցությամբ և համոզված եմ, որ բոլորիս համատեղ ջանքերի ու բարձր պատասխանատվության միավորմամբ կարող ենք կառուցել մարդու իրավունքների ու ազատությունների լիարժեք և լիիրավ համակարգ: